ԿՈՉԻ ԲԵՅԻ ԵՐԿՐՈՐԴ «ՌԻՍԱԼԵՆ»

Կոչի Բեյը 1041 (1631—1632) թվականին սուլթան Մուրադ IV-ին ներկայացրած «Ռիսալե»-ից հետո, սուլթան Իբրահիմի հրամանով նրան նորից ներկայացնում է իր երկրորդ «Ռիսալեն»[14]։

Իր երկրորդ «Ռիսալե»-ում Կոչի Բեյը սուլթան Իբրահիմին առաջարկում է հիմնական ուշադրությունը դարձնել պետական գանձարանի կարգավորման և ռազմական ուժերի (գլխավորապես ենիչերիական բանակի) վերակազմության գործերին։ Կոչի Բեյը իր այս «Ռիսալե»-ում հիմնականում կրկնում է իր տեսակետներն ու դատողությունները Օսմանյան կայսրության անկման և քայքայման պատճառների, «աղքատ ռայաների» տնտեսական վիճակի վատթարացման, գյուղատնտեսության դեգրադացիայի մասին և այլն։

Ինչպես իր առաջին զեկուցագրում, այստեղ ևս, փոքր և միջին ավատատեր-թիմարատերերի գաղափարախոս և նրանց ձգտումների արտահայտիչ Կոչի Բեյը հավատացած է, որ «բավական է միայն վերականգնել «սրի մարդկանց» առանձնաշնորհումները և ամեն ինչ կստանա իր նորմալ վիճակը... Բարձրյալն Աստծու կամքով պետության մեջ կարգ կհաստատվի, բարձրագույն իշխանությունը [յիադիշահական իշխանությունը] կվերստանա իր նախկին փայլը, իսլամի սուրը կլինի անպարտելի և թշնամիները՝ հլու-հպատակ»*։

Երկրորդ «Ռիսալե»-ի 19 գլուխներում ընդգրկված են բազմատեսակ վարչական, ռազմական, տնտեսական, հողային, հարկային և այլ հարցեր։

Նրա քննության առած հարցերից առանձնապես պետք է նշել սուլթանական արքունիքի կազմակերպության, շնորհումների [պաշտոններ, աստիճաններ, տիտղոսներ և այլն], պատմությունը կարդալու և գործի հանգամանքներին ծանոթանալու, ենիչերիական բանակը վերակազմելու, սեփականությունների [հողային] բաժանման և խասերի քանակի, հարկերի, դատավարության, դրամների մասին և այլ հարցեր։

---

* А. С. Тверитинова, նշվ. աշխ., էջ 218։